Թ

ԱՐԿԱԾՔ ԱԿՈԲՍՈՅ ԿԱՄԵՆԻՑՅԻ

ՀԱՅԱԶԳԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ

1672ին (Մէհմէտ Դ. Կամենիցի տիրելով, երբ քրիստոնեայ բնակիչք կը Թոզուն, կը հեռանան քաղաքէն, այլազգիք մեծամեծ խոստմունքներ անելով՝ կ'առնուն կը մնան զՀայս. սակայն 600 հոգի, 'ի Թիւս որոց և 14 կուսանք, կը հեռանան 'ի Կամենիցէ։ Սոցա հետ կար տասուերկու տարեկան մանուկ մի, որդի Կամենիցցի Հայու, որ քիչ ժամանակէ 'ի վեր որբ և անտէր մնացել էր։ Մայրը վաղուց մեռած էր, իսկ հայրը դեռ նոր՝ Կամենիցի առման միջոց՝ իւր տունը հրդեհէն ազատելու աշխատելով՝ բոցոյն ճարակ եղել էր։ Այս փոքր երախայն (որովհետև հայրը միշտ յարաբերութիւններ ունեցել էր Թաթարաց հետ), համարձակ կը խօսէր Թաթարաց, նոյն և Թրքաց լեզուով. այդ լեզուաց գիտութիւնը՝ վերջերը՝ մանկան մեծ Թարգմանի պաշտօնի հասնելու պատճառ եղաւ։ Գաղթականաց խուռն բազմութեան մէջ, մի միակ մերձաւոր անձն մի ունէր այս մանուկս, որ էր պառաւեալ Կոյսն Հռիփսիմէ, չորեքտասան մայրապետաց մին, որ և իրեն մայրագիր եղած էր։ Կուսանաց վանքին բեռները կրկին ուղտերու շալակ բեռնաւորած էին, և Յոհաննիկ մանուկն՝ այդ ուղտերէն մէկուն վրայ հեծած, որ կապոցներուն և պարկերուն միջէն հագիւ կ'երևար, և կանանց ճիշն,